**«Երիտասարդության ուժը՝ երիտասարդական քաղաքականության մեջ» ամառային դպրոց. Հանրային քաղաքականության ոլորտներում վերապատրաստող փորձագետի ծառայություններ մատուցելու գնային առաջարկ ներկայացնելու հրավեր**

**ք. Երևան** **08.05.2023թ.**

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ՄԶՄԿ) 2022թ. հունիսից միացել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրին, որն իրականացնում է «Փրոջեքթ Հարմոնի Հայաստան» հասարակական կազմակերպության գլխավորած կոնսորցիումը, որի անդամներն են նաև ՄԶՄԿ-ն, Սիվիտաս Հայաստանը և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում դպրոցական և արտադպրոցական քաղաքացիական կրթության որակն ու ընդլայնել դրա ազդեցության շրջանակը, որպես հանրային կյանքում երիտասարդների ներգրավվածության խթանման միջոց՝ աջակցելու Հայաստանում ժողովրդավարական հասարակության ուժեղացմանը:

Համակարգային փոփոխություններ իրականացնելուն ուղղված ՔՀԿ-ների և երիտասարդների կարողություններն ու հանձնառությունը զարգացնելու նպատակով ՄԶՄԿ-ն 2023-2025 թվականների ընթացքում յուրաքանչյուր տարի նախատեսում է կազմակերպել ամառային դպրոցներ՝ 5-օրյա վերապատրաստման դասընթացների ձևով: Յուրաքանչյուր տարի ամառային դպրոցին մասնակցելու նպատակով Հայաստանի բոլոր մարզերից կընտրվեն 21-29 տարեկան 16 երիտասարդներ: Երիտասարդները կանցնեն վերապատրաստում հանրային քաղաքականության մշակման և օրինաստեղծ գործունեության վերաբերյալ, որից հետո նրանց կառաջարկվի կիրառել ձեռք բերված գիտելիքները՝ մշակելով նորարարական երիտասարդական նախաձեռնություններ և քաղաքականության առաջարկներ: Աշխատանքները կիրականացվեն հանրային տարբեր ոլորտներում քաղաքականության նախաձեռնություններ մշակելու փորձ ունեցող փորձագետների՝ մենթորների օժանդակությամբ:

Ամառային դպրոցի նպատակն է հնարավորություն ընձեռել երիտասարդ հետազոտողներին և ակտիվիստներին.

ա) զարգացնել հանրային քաղաքականության վերլուծության, լուծումների առաջադրման և ջատագովության հմտություններ,

բ) առաջադրել հետազոտության նոր գաղափարներ, հարցադրումներ, վարկածներ,

գ) համագործակցել հասակակիցների հետ և ընդլայնել գործընկերային ցանցը,

դ) ավելի լավ հասկանալ, թե ինչպիսին կարող է լինել հանրային քաղաքականության հետազոտողի կամ մասնագետի կարիերան,

ե) ունենալ մենթոր և ընտրած թեմայով հետազոտություն իրականացնելիս ստանալ շարունակական աջակցություն,

զ) ստեղծել երիտասարդ հետազոտողների ցանց:

Ամառային դպրոցի շրջանակներում դասընթացներն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու նպատակով ՄԶՄԿ նախատեսում է ներգրավել հանրային քաղաքականության մշակման և վերապատրաստման փորձագետի (այսուհետ՝ Փորձագետ):

Փորձագետը մասնակցելու, օժանդակելու և վարելու է դասընթացներ Ծրագրի վերապատրաստման և կարողությունների զարգացման մասնագետի՝ ծրագրային կոմպոնենտի համակարգողի հետ սերտ համագործակցությամբ և վերասկողությամբ:

Փորձագետը պետք է կատարի հետևյալ պարտականությունները.

- Ամառային դպրոցի մասնակցության հայտերի ցանկի գնահատում,
- Ամառային դպրոցի ընտրված մասնակիցների նախնական ուղորդում և առաջադրանքների տրամադրում,
- Ամառային դպրոցի ֆասիլիտատոր/վերապատրաստող,
- Ամառային դպրոցի նախնական և հետագա առաջադրանքների իրականացման վերաբերյալ հետադարձ կապ/գնահատման աշխատանքներ,
- Հանրային քաղաքականության փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ անհատական դիտարկում/հետադարձ կապ,
- Ամառային դպրոցի մասնակիցների կողմից հանրային քաղաքականության առաջարկությունների առաջխաղացման/ջատագովության պլանի վերաբերյալ կարծիք/հետադարձ կապ:
- Խմբային և/կամ անհատական մենթորության տրամադրում ամառային դպրոցի մասնակիցներին, ամառային դպրոցի ավարտից հետո

Փորձագետի պահանջվող որակները.

- Հանրային քաղաքականության հետազոտական կենտրոններում (think-tank) աշխատանքի առնվազն 15 տարվա աշխատանքային փորձ,
- Հանրային քաղաքականությանն առնչվող սոցիալական մասնագիտություն, մասնավորապես տնտեսագետ, սոցիոլոգ, քաղաքագետ, իրավաբան և այլն մասնագիտություն,
- Տիրապետի Հանրային քաղաքականության ջատագովության միջազգային կենտրոնի (International Center for Policy Advocacy) կամ Տեղական կառավարման

նախաձեռնության Քաղաքականության միջազգային ցանցի (Local Government Initiative – International Policy Fellows network) մեթոդաբանությանը,
- Հանրային քաղաքականության փաստաթղթերի մշակման առնվազն 10 տարվա փորձ,
- Պետական համակարգում աշխատանքային փորձը կդիտարվի որպես առավելություն.

Առաջին տարվա ամառային դպրոցի կազմակերպման ժամկետներն են (ամառային դպրոցի ցիկլ).

- Մասնակիցների ընտրություն և նախնական առաջադրանքների տրամադրում 2023թ. հունիսի 10-ից 24-ը
- Ամառային դպրոց՝ 2023թ. հունիսի 26-ից 30-ը:
- Առաջադրանքների գնահատում, հետադարձ կապ և մենթորական խմբային և անհատական աշխատանքներ (հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի փետրվար ամիսը)
- Ծառայությունները, ըստ անհրաժեշտության, կարող են մատուցվել Երևանում, ՀՀ տարբեր մարզերում և առցանց:

Հրավիրում ենք հետաքրքրված ֆիզիկական անձանց (անհատ ձեռներեցներին (Ա/Ձ)) ներկայացնել ծառայությունների մատուցման գնային առաջարկ:

Խնդրում ենք առաջարկի մեջ ներկայացնել հակիրճ տեղեկություններ փորձագետի պահանջվող որակների վերաբերյալ, կցել CV-ն, և տրամադրել կոնտակտային տվյալներ: Ծառայությունների գինն անհրաժեշտ է ներկայացնել՝ առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում՝ առանց ԱԱՀ-ի՝ Ա/Ձ կողմից առաջարկ ներկայացնելու դեպքում: Տվյալ դեպքում գնային առաջարկի մեջ անհրաժեշտ է ներառել նաև Ա/Ձ անվանումը, հասցեն, պետական գրանցման տարեթիվն ու գրանցման համարը, ինչպես նաև տեղեկություն ԱԱՀ վճարող լինելու մասին:

Նախապատվություն կտրվի այն հայտին, որում առաջարկված գնին և պահանջվող որակների նկարագրությանը գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա տրված գնահատականի հանրագումարը կլինի լավագույնը: Հայտերի ընդհանուր գնահատականի մեջ ոչ գնային և գնային առաջարկների հարաբերակցությունը կկազմի համապատասխանաբար 80% և 20%:

ՄԶՄԿ-ն երկու օրացուցային օրվա ընթացքում ընտրված մասնակցին կծանուցի՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընտրված անձի հետ կկնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր: Խնդրում ենք հաշվի առնել, որ վերոհիշյալ ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, ուստի խնդրում ենք Ա/Ձ հանդիսանալու դեպքում գինը ներկայացնել առանց ԱԱՀ-ի: Աշխատանքների

իրականացման պայմանագիրը կնքելու դեպքում ՄԶՄԿ-ն կտրամադրի հարկազատման տեղեկանք:

Խնդրում ենք առաջարկը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ lmelikyan@ichd.org էլ.փոստի հասցեով կամ առձեռն՝ Երևան, Սայաթ Նովա 19, բիզնես հարկ 18 սենյակ:

Առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է 2023թ. հունիսի 8-ը:

Ներկայացված առաջարկների նախնական ուսումնասիրության արդյունքում ընտրված հայտատուները կհրավիրվեն հարցազրույցի: Ընտրված հայտատուին կառաջարկվի կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ բոլոր երեք ամառային դպրոցների համար նախատեսված ողջ ժամկետի տևողությամբ: Յուրաքանչյուր ամառային դպրոցի ցիկլի համար նախատեսվող առավելագույն ջանքերի/օրերի առավելագույն քանակը կազմում է 54 օր:

Պարզաբանումների համար զանգահարել՝ 010-582638

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ